


ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2021 [4]
ԵՐԵՎԱՆ



ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ

ՄՐՑԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

ԷՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՄԵԼԱՆՅԱ ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դասախոս

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

**ԹՈՉՆԱՄՍԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում «Միս» ապրանքային խմբի սպառման կառուցվածքն էականորեն փոփոխվել է՝ առավելապես թոչնամսի, իսկ դրա մեջ՝ հավի մսի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ:

Թոչնամսի սպառման ծավալների աճի նման տեմպերի արդյունքում աշխարհում թոչնամսի սպառումն արդեն իսկ գերազանցել է մսի մյուս՝ սպառման տեսանկյունից ավանդական համարվող տեսակների սպառման ծավալները՝ «Միս» ապրանքային խմբի սպառման մեջ ապահովելով 40% մասնաբաժին:

Թեև Հայաստանի Հանրապետությունում սպառվում են մսի բոլոր տեսակները, այնուամենայնիվ, մսի համաշխարհային սպառման կառուցվածքային փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել նաև մեր երկրում. վերջին տարիներին մսի սպառման ծավալների մեջ աճի ամենաբարձր տեմպերն արձանագրել է թոչնամսիսը: Լինելով փոքր տնտեսություն ունեցող երկիր, որը սպառվող թոչնամսի շուրջ 70–75%-ը ներմուծում է, ՀՀ-ն արձագանքում է համաշխարհային տնտեսությունում ընթացող՝

մսի սպառման փոփոխություններին: Ուստի, այս առումով էապես կարևորվում է թոչնամսի համաշխարհային և տեղական շուկաների ու դրանցում դրսևորվող փոփոխությունների հիմնական միտումների ուսումնասիրությունը՝ բացահայտելու դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Ինչպես մսի առանձին տեսակների նկատմամբ սպառողական նախասիրությունների փոփոխություններով պայմանավորված՝ սպառման ծավալների հնարավոր փոփոխությունները, այնպես էլ դրանց ազդեցությամբ ներքին շուկայի կառուցվածքային տեղաշարժերը:

Հիմնաբառեր. թոչնամսի, հավի միս, թոչնամսի արտադրություն, թոչնամսի սպառման մշակույթ, հավի մսի տեղական արտադրություն

JEL: L1, Q11, Q12

DOI: 10.52174/1829-0280_2021_4_115

Ներածություն: Աշխարհի ցանկացած երկրի բնակչության սպառողական զամբյուղի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում միսն ու մսամթերքը: Բնակչության սպառման կառուցվածքում ավանդաբար գերակշռել են կարմիր մսի տեսակները (տավարի միս, ոչխարի միս և այլն), իսկ սպիտակ տեսակներից՝ խոզի միսը, որոնք համարվում են առավել թանկ սննդամթերքներ և հիմնականում ներառվում են եկամտային միջին և բարձր մակարդակ ունեցող երկրների ու բնակչության խմբերի սննդակարգում: Ավելի ցածր եկամտային խմբերում ներառվող երկրների կամ բնակչության խմբերի սպառման կառուցվածքում ավանդաբար գերակշռել է ոչ մսային՝ առավելապես հացահատիկային հիմքով և ավելի էժան սննդակարգը: Սակայն վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն աճել են նաև թոչնամսի, մասնավորապես՝ հավի մսի սպառման ծավալները: Այս հանգամանքը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցում թոչնամսի ցածր գինը՝ մսի մյուս, հատկապես կարմիր տեսակների համեմատությամբ, թերևս, ամենանշանակալին է: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ աշխարհում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, մսի սպառման ծավալների հետևողական աճին զուգահեռ, էականորեն փոխվում է նաև մսի սպառման կառուցվածքը՝ առավելապես թոչնամսի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ: Ընդ որում, այդ միտումը նկատելի է OECD-ի¹ դասակարգմամբ բոլոր եկամտային խմբերում ներառված երկրների սպառման կառուցվածքներում:

Այս միտումն առկա է նաև Հայաստանում, որտեղ թոչնամսի տարեկան սպառման ծավալները կազմում են շուրջ 50–55.0 հազ. տոննա, որի մոտ 70–75%-ը ներմուծվում է: Նկատի ունենանք, որ Հայաստանը, ունենալով փոքր բաց տնտեսություն, անմիջականորեն կրում է միջազգային տարբեր ապրանքային և հումքային շուկաներում, այդ թվում՝ թոչնամսի շուկայում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը:

Այս իրավիճակի արդյունքում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում մշտապես ուսումնասիրելու մսի միջազգային շուկաների զարգացումները՝ որպես ներքին տնտեսության զարգացումը կանխորոշող հիմնական

¹ Կիրառվող դասակարգման շեմերը՝ մեկ շնչի հաշվով եկամուտների հիման վրա: Ցածր եկամուտներով երկրներ՝ <1550 ԱՄՆ դոլար, ցածր միջին՝ <3895 ԱՄՆ դոլար, բարձր միջին՝ <13 000 ԱՄՆ դոլար, բարձր՝ >13 000 ԱՄՆ դոլար:

գործոն, որն էլ հիմք կհանդիսանա պետության տնտեսական քաղաքականության մեջ համապատասխան փոփոխությունների մշակման և հիմնավորման համար:

Սույն հետազոտության շրջանակներում կփորձենք դիտարկել թռչնամսի միջազգային շուկայի զարգացման հիմնական միտումներն ու հանգամանքները, ինչպես նաև դրանց հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Գրականության ակնարկ: Բազմաթիվ հեղինակներ տարբեր ժամանակներում անդրադարձել են թռչնամսի արտադրությանը և թռչնամսի շուկայում դրսևորվող միտումներին ու առանձնահատկություններին: Այսպես՝ Մ. Ջենները թռչնաբուծության զարգացման հիմնախնդիրներին անդրադարձել է դեռևս 2002 թ.¹ հիմնականում դիտարկելով ֆինանսավորման խնդիրները, ինչպես նաև ոլորտում ներդրումների ներգրավման ու կապիտալի հետզնման առանձնահատկությունները²:

Ռ. Թեյլորը և Դ. Դոմինան 2010 թ. հրապարակած աշխատությունում լայնորեն քննարկում են թռչնաբուծության ոլորտը, դրա դերը սննդի արդյունաբերության մեջ: Շատ կարևոր են հեղինակների կողմից ոլորտի վերաբերյալ բարձրացվող հիմնահարցերը, որոնք առնչվում են թռչնամսի արտադրության ֆինանսատնտեսական խնդիրներին, միջազգային շուկայում թռչնամսի առաջարկի և պահանջարկի համամասնություններին, թռչնամսի առանձին շուկաների կենտրոնացվածության աստիճանին, ոլորտում առկա տնտեսական ռիսկերին և դրանց կառավարման մեթոդներին: Առանձնահատուկ ուշադրություն են դարձրել թռչնամսի շուկայում առկա անհավասար մրցակցային պայմաններին և կատարել գործնական առաջարկություններ՝ շուկայում առկա անորոշության ու անհավասար մրցակցային պայմանների վերացման ուղղությամբ³:

Մսամթերքի օգտագործման ձևերին և ուղղություններին՝ որպես առանձին մշակույթի, անդրադարձել է Հ. Սվաթլանդը 2010 թ.: Վերջինս հետաքրքիր պատմական ակնարկով ներկայացրել է մսի սպառման ավանդույթներն ըստ տարբեր պատմական ժամանակաշրջանների և աշխարհագրական տարածաշրջանների⁴:

2015 թ. Ս. Բարբուսն իր «Թռչնաբուծության և մսի վերամշակման գիտությունը» աշխատության մեջ մանրամասնորեն անդրադառնում է թռչնարտադրության պատմությանը՝ ներկայացնելով ողջ տեխնոլոգիական առաջընթացը, որն արձանագրվել է այդ ոլորտում վերջին 50–60 տարիների ընթացքում: Ընդ որում, տեխնոլոգիական տպավորիչ առաջընթաց է գրանցվել ոչ միայն թռչունների աճեցման (1 օրականից մինչև մորթն ընկած ժամանակահատվածը), այլև թռչնամսի վերամշակման, տեսակավորման, փաթեթավորման գործընթացներում: Արդյունքում՝ տեխնոլոգիական հսկայական առաջընթացի շնորհիվ էականորեն կրճատվել է թռչունների աճի ժամանակահատվածը, աճել է մսատվության մակարդակը: Թռչնարտադրության մեջ ներ-

² Տե՛ս Jenner M., Understanding the Lender's Share of Grower Contract Pay, January 3, 2002:

³ Տե՛ս Swatland H.J., Meat Products and Consumption Culture in the West, Meat Science, 86, 2010, էջ 80-85:

⁴ Տե՛ս Taylor R. and Domina D., Restoring Economic Health to Contract Poultry Production, 2010:

դրվել է նոր մշակույթ, որի արդյունքում վերջին երկու տասնամյակների ընթացքում, որպես վերջնական արտադրանք, թռչնամիսը սպառվում է ավելի շատ ոչ թե ամբողջական հավի, այլ դրա առանձին մասերի տեսքով⁵:

Զ. Հելինի, Վ. Քրիշնայի, Օ. Էրենսթեյնի և Ք. Բոեբերի աշխատության մեջ մսի, մասնավորապես՝ թռչնամսի շուկան դիտարկվում է դրանում դրսևորվող հիմնական միտումների ուսումնասիրության շեշտադրմամբ: Աշխատանքի մեջ հիմնական ուշադրությունը դարձվում է ասիական երկրներում (մասնավորապես՝ Հնդկաստանում) թռչնարտադրության զարգացմանը: Առանձնացվել են 2 հիմնական գործոններ, որոնք էականորեն ազդում են թռչնամսի արտադրության ծավալների աճի վրա.

1. թռչնամիսն, ի տարբերություն մսամթերքի այլ տեսակների, համեմատաբար էժան է,
2. թռչնամսի օգտագործումը չունի տարածաշրջանային սահմանափակումներ՝ պայմանավորված մարդկանց կրոնական, մշակութային և այլ նախասիրություններով:

Օրինակ՝ Հնդկաստանում, որտեղ գերակշռում է հինդուիզմը, մեծապես սահմանափակված է տավարի մսի օգտագործումը, ինչը լրացուցիչ խթան է հանդիսանում թռչնամսի սպառման ծավալների աճի համար: Նույնկերպ՝ իսլամ դավանող բնակչություն ունեցող երկրներում խոզի մսի օգտագործման արգելքը մեծացնում է թռչնամսի նկատմամբ պահանջարկը:

Ըստ հեղինակների՝ թռչնամսի ոլորտի զարգացումն ունի նաև որոշակի սոցիալական ուղղվածություն: Նախ՝ դա կարևոր է գյուղատնտեսության զարգացման համար, քանի որ ունի մեծ բազմարկչային էֆեկտ, երկրորդ՝ թռչնամիսն ու ձուն համարվում են էժան սնունդ և ամենօրյա սննդի կարևոր մաս՝ հատկապես զարգացող երկրներում⁶:

Հարկ ենք համարում նշել, որ մսամթերքի սպառման նախասիրությունների փոփոխության համաշխարհային թրենդի՝ ՀՀ-ի վրա ունեցած ազդեցության ուղղությամբ կատարված հետազոտություններ չկան:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել թռչնամսի համաշխարհային արտադրության, սպառման, առևտրի և միջազգային գների վերաբերյալ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (Food and Agriculture Organization (FAO)) տեղեկատվական աղբյուրները, ՀՀ թռչնամսի, մասնավորապես՝ հավի մսի արտադրության և ներմուծման ծավալների, գների վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի և պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազաները, ինչպես նաև ՀՀ ՏՄՊՊՀ տարբեր տարիների հրապարակումները:

Թռչնամսի համաշխարհային արտադրության և սպառման ծավալների վերաբերյալ ցուցանիշները վերլուծվել են 30 տարվա կտրվածքով՝ 1990–2020 թթ., իսկ ՀՀ ցուցանիշները՝ 2005–2020 թթ. կտրվածքով, քանի որ

⁵ Տե՛ս **Barbut S.**, The Science of Poultry and Meat Processing, Chapter 2, 2015:

⁶ Տե՛ս **Hellin J., Krishna V., Erenstein O. and Boeber C.**, India’s Poultry Revolution: Implications for Its Sustenance and the Global Poultry Trade, International Food and Agribusiness Management Review, 18, 2015:

ՀՀ-ի վերաբերյալ համապատասխան վիճակագրությունն ամբողջական չէ. որոշ դեպքերում անհրաժեշտ տվյալները բացակայում են, իսկ որոշ դեպքերում շարքերն անհամադրելի են:

Ինչ վերաբերում է վերլուծություններում օգտագործված ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությանը, ապա թռչնամսի համաշխարհային արտադրության ծավալներն արտացոլված են օրացուցային տարվա համար: Ամբողջական առաջարկը ներառում է տարեսկզբի մնացորդի և տարվա ընթացքում արտադրության ծավալների հանրագումարից հանելով ոչ սպառման նպատակով օգտագործումների (արտադրական և այլ կորուստների, անասնակերի ու այլ օգտագործման հանրագումարը) և տարեվերջի մնացորդի հանրագումարը, իսկ պահանջարկը՝ սպառման ծավալների և տարեվերջի մնացորդի տարբերությունը: Ինքնաբավության մակարդակը որոշվել է որպես արտադրության ծավալի և կորուստների տարբերության հարաբերություն՝ սննդի տեսքով օգտագործման ծավալին:

Թե՛ համաշխարհային և թե՛ ՀՀ-ի վերաբերյալ վերլուծություններում թռչնամսի գները և դրանց փոփոխությունները չեն դիտարկվել, բնականաբար, չի դիտարկվել նաև թռչնամսի արտադրության և սպառման ծավալների փոփոխությունների կախվածությունը գների փոփոխություններից, ինչն, անշուշտ, մեծ է: Սակայն սույն հոդվածի նպատակը թռչնամսի համաշխարհային և ՀՀ սպառման ծավալների վրա գների ազդեցության գնահատումն չէ: Մեր խնդիրն է տարբեր եկամտային խմբերի երկրների համար թռչնամսի սպառման ծավալների փոփոխությունների գնահատման միջոցով ցույց տալ, որ աշխարհում մսի առանձին տեսակների սպառման ծավալների եկամուտներից կախվածությունը թուլացել է, և թռչնամսի սպառման աճն աշխարհում ու Հայաստանում պայմանավորված է ոչ միայն և ոչ այնքան վերջինիս ցածր գնով՝ մսի մյուս տեսակների համեմատությամբ, որքան բնակչության սպառողական նախասիրությունների և մսի առանձին տեսակների նախընտրելիության փոփոխություններով, մշակութային, ավանդույթային գործոններով և այլն:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են մաթեմատիկական վիճակագրության, վերլուծության ու համադրման, ցուցանիշների թվային շարքերի վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Վերլուծություն:

Թռչնամսի համաշխարհային շուկայի զարգացման միտումները

Բնակչության կողմից սպառվող մսի ամենահայտնի տեսակներից են կարմիր միսը (տավարի միս, ոչխարի միս), սպիտակ միսը (հիմնականում՝ թռչնամիս, որոշ դեպքերում՝ խոզի միս) և ծովամթերքը (ծուկ և խեցեմորթ), որոնց սպառման ծավալներն աշխարհում շարունակ աճում են: Ընդ որում, մսի սպառման ծավալների աճը պայմանավորված է ինչպես բնակչության թվի, այնպես էլ եկամուտների ընդհանուր աճով: Եկամուտների ընդհանուր աճը հանգեցրել է բնակչության գնողունակության բարձրացմանը, ինչի արդյունքում սպառողները հացահատիկի վրա հիմնված սննդակարգից աստիճանաբար անցում են կատարում այնպիսի սննդակարգի, որում մսի սպառման ծավալներն ավելի մեծ են: Սակայն եթե ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում, եկամուտների ընդհանուր մակարդակի աճով պայմանավորված, մսի սպառման ծավալների աճն ապահովվում է առավելապես

թռչնամսի հաշվին, քանի որ վերջինս մսի մյուս տեսակների համեմատությամբ ամենաէժեքն է, ապա ավելի բարձր եկամուտ ունեցող երկրներում այդ միտումը թռչնամսի ցածր գնով պայմանավորել չենք կարող ակնհայտ է, որ այս դեպքում դա պայմանավորված է սպառողների կողմից սպիտակ մսի նախապատվությամբ, որն ընկալվում է որպես ավելի առողջ, սննդարար և միաժամանակ դիետիկ սննդամթերք:

Ընդ որում, վերը նշված հանգամանքները պայմանավորել են աշխարհում մսի բոլոր տեսակների ծավալների էական աճը, որի շրջանակներում աճի ամենաբարձր տեմպը արձանագրել է հենց թռչնամսի արտադրությունը: Այսպես՝ 2019 թ. մսի բոլոր տեսակների արտադրության ծավալները 1960-ական թվականների համեմատությամբ աճել են շուրջ 3.5, իսկ 1999 թ. համեմատությամբ՝ 1.5 անգամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1


Մսի համաշխարհային արտադրության ծավալներն ու աճի տեմպերը⁷
(մլն տոննա)

Մսի տեսակը	1990	1995	2000	2005	2010	2015	2020	1990–2020 թթ. աճի միջին տարեկան տեմպը
Տավարի	53.9	56.3	59.1	63.0	65.9	66.2	70.5	1.2
Խոզի	68.4	78.9	89.5	98.4	108.6	119.5	108.3	2.53
Ոչխարի	9.6	10.4	11.5	12.8	13.5	14.7	16.0	1.8
Թռչնամիս	33.1	54.1	68.0	80.9	99.8	116.0	133.6	4.47
Ընդամենը	165.0	199.7	228.1	255.1	287.8	316.4	328.4	2.6

Ըստ աղյուսակի՝ մսի բոլոր տեսակների համաշխարհային արտադրության ծավալները 2020 թ., 1990 թ. համեմատությամբ, գրեթե կրկնապատկվել են: Մսի համաշխարհային արտադրության ծավալները դիտարկվող ժամանակահատվածում աճել են տարեկան միջինը 2.3%-ով, ընդ որում՝ տավարի, խոզի և ոչխարի մսի արտադրությունն աճել է տարեկան համապատասխանաբար՝ 0.9%-ով, 1.6%-ով և 1.7%-ով, իսկ թռչնամսի արտադրությունը՝ 4,8%-ով: Արդյունքում՝ էականորեն փոխվել է մսի համաշխարհային արտադրության կառուցվածքը: Այսպես՝ թռչնամսի արտադրության մասնաբաժինը մսի արտադրության ընդհանուր ծավալում 1990–2020 թթ. աճել է ավելի քան 2 անգամ՝ 21.1%-ից հասնելով 40.7%-ի՝ ի տարբերություն տավարի և խոզի մսի, որոնց մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար՝ 32.7%-ից մինչև 21.5%-ով և 41.5%-ից մինչև 33.0%-ով (զծապատկեր 1):

Վերոնշյալ փոփոխությունների հետևանքով թռչնամսի արտադրության ծավալը դիտարկվող ժամանակահատվածում «Միս» ապրանքային խմբի ընդհանուր ծավալի մեջ ունեցած մասնաբաժնով երրորդ տեղից բարձրացել է առաջին տեղը: Արդյունքում՝ տավարի մսի արտադրության մասնաբաժինը նվազել է 33.8%-ով, իսկ խոզի մսինը՝ 20.5%-ով: Ինչ վերաբերում է ոչխարի մսի արտադրության մասնաբաժնին, ապա դիտարկվող 30 տարիներին համեմատաբար կայուն է և նվազել է ընդամենը 0.9%-ով:

⁷ Աղբյուրը՝ World Agriculture: Towards 2015/2030. An FAO Perspective, <http://www.fao.org/docrep/005/y4252e/y4252e07.htm>



Գծապատկեր 1. Մսի համաշխարհային արտադրության կառուցվածքը⁸

Դատելով մսի տարբեր տեսակների համաշխարհային արտադրության աճի տեմպերից՝ թռչնամսի արտադրության ծավալների առաջանցիկ աճը շարունակվելու է նաև ապագայում, և առաջիկա տասնամյակում թռչնամիսը լինելու է սպիտակուցային մսի արտադրության, հետևաբար նաև սպառման համաշխարհային բացարձակ առաջատարը:

Այդ աճը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.


- թռչնամսի գինը զգալիորեն ցածր է մսի մյուս տեսակների, հատկապես՝ տավարի և խոզի մսի գներից,
- թռչունների աճի գործընթացը (1 օրականից մինչև մորթն ընկած ժամանակահատվածը) առավել արագ է մաստուս մյուս կենդանատեսակներից,
- թռչնամսի արտադրության գործընթացի կազմակերպումն ավելի հեշտ է և նվազ ծախսատար՝ ի տարբերություն մսի մյուս տեսակների արտադրության (անհրաժեշտ տարածքի, օգտագործվող ջրի, կերի ու այլ առումներով),
- հավի մսի սննդային որակների վերաբերյալ մարդկանց մեջ առկա է դրական ընկալում (համեղ է, ցածր կալորիականությամբ է և սննդարար),
- գործնականում բացակայում են թռչնամսի սպառման կրոնական և մշակութային սահմանափակումները, որոնք առկա են, օրինակ՝ խոզի մսի պարագայում:

Բացի վերոնշյալ հանգամանքներից, պետք է նշել, որ ներկայումս աշխարհի բազմաթիվ երկրների կառավարությունների կողմից իրականացվում է կոնկրետ թռչնամսի արտադրության խթանման՝ հովանավորչության սահմանների ընդլայնման հասցեական քաղաքականություն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ թռչնամսի արտադրությունը դիտարկվում է որպես ներառական, արագ աճ ապահովող, բնական հիմքով արդյունավետ արտադրությունների կազմակերպման ոլորտ (ԱՄՆ, Կանադա, Չինաստան, ԵՄ բազմաթիվ երկրներ), քանի որ այս ոլորտի զարգացման ժամանակակից միտումներն արտահայտվում են արտադրական գործընթացի տարբեր

⁸ Նույն աղբյուրը:

օղակների համակենտրոնացման բարձր հակվածությամբ: Այսպես՝ լոգիստիկ ծախսերի օպտիմալացման և բուսասանիտարական պահանջների կառավարելիության նկատառումներից ելնելով, թռչնամսի արտադրության ոլորտն աշխարհում աչքի է ընկնում խոշոր մասնագիտացված համալիրներում արտադրության բոլոր պարբերաշրջանների համախմբմամբ՝ որպես մեկ արտադրական միավոր, որն ինքնին դառնում է համակարգաստեղծ ոլորտ՝ բազմարկչային մեծ էֆեկտով, քանի որ հումքային բազայի կախվածությունը ներմուծումից փոքր է:

Այսպիսով՝ մսի առանձին տեսակների արտադրության ծավալների աճն ու «Միս» ապրանքային խմբի կառուցվածքային տեղաշարժերը, որոնք պատկերված են գծապատկեր 2-ում, հիմնականում պայմանավորված են սպառման ծավալների և նախասիրությունների՝ վերը քննարկված փոփոխություններով:



Գծապատկեր 2. Մսի առանձին տեսակների համաշխարհային սպառման ծավալները 1990–2020 թթ. (մլն տոննա)⁹

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածի սկզբում՝ 1990 թ., մսի նշված տեսակների մեջ սպառման ամենամեծ ծավալներն աշխարհում ունեցել է խոզի միսը, որը սպառման բացարձակ մեծությամբ շուրջ 31%-ով գերազանցել է տավարի մսի, 2.2 անգամ՝ թռչնամսի և 7.9 անգամ՝ ոչխարի մսի սպառման ծավալները: Դիտարկվող ժամանակահատվածի վերջին՝ 2020 թ., խոզի մսի համաշխարհային սպառման ծավալները գերազանցել են տավարի մսի սպառումը 54%-ով, ոչխարի մսինը՝ 8.2 անգամ, իսկ արդեն հավի մսի սպառման ծավալներին զիջում են շուրջ 22%-ով: Ընդ որում, խոզի մսի և թռչնամսի համաշխարհային սպառման ծավալները գրեթե հավասարվել են 2016 թ. ցուցանիշին՝ կազմելով շուրջ 118.0 մլն տոննա, որից հետո խոզի մսի համախառն սպառումն աշխարհում սկսել է նվազել, իսկ թռչնամսի սպառման ծավալների աճը շարունակվել է: Այսպես՝ եթե դիտարկ-

⁹ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#

վող 30-ամյա ժամանակահատվածում տավարի մսի համաշխարհային սպառումն աճել է 1.5 անգամ, խոզի մսինը՝ 1.7, իսկ ոչխարի մսինը՝ շուրջ 2 անգամ, ապա թռչնամսի սպառումն աճել է 4.6 անգամ: Արդյունքում՝ սպառման տարեկան աճի միջին տեմպը կազմել է ընդամենը մսի դեպքում՝ 2.7%, տավարի մսի դեպքում՝ 1.3%, խոզի մսի դեպքում՝ 1.9%, ոչխարի մսի դեպքում՝ 2.4%, իսկ թռչնամսի դեպքում՝ 5.4%:

Այսպիսով՝ 1990 թ. ի վեր մսի առանձին տեսակների սպառման ծավալներից աճի ամենաբարձր տեմպերն ունեցել է հենց թռչնամսի սպառումը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այս միտումն առաջիկա տասնամյակում շարունակվելու է՝ պայմանավորված թռչնամսի սպառման՝ վերը դիտարկված նախասիրությունների, մշակութային, ավանդույթային փոփոխություններով: Բացի դրանից, այդ աճը պայմանավորել են նաև այլ գործոններ, որոնց մեջ հարկ է նշել միայն հավի մսից պատրաստվող ուտեստների ուղղությամբ մասնագիտացված ռեստորանների տարածումն աշխարհում (օրինակ՝ KFC): Հատկանշական են նաև վերջին 30 տարիների ընթացքում թռչնամսի արտադրության և իրացման ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները՝ կապված թռչնամսից նոր արտադրատեսակների առաջացման հետ, որոնք հանդես են գալիս որպես վերամշակված արտադրանք և դառնում թռչնամսի ավանդական արտադրանքի սպառման այլընտրանքներ:

Մինչև 2000-ական թվականները թռչնամսիսը՝ առավելապես հավի միսը, վաճառվել է հիմնականում ամբողջական հավի տեսքով: Օրինակ՝ այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ում հավի մսի իրացման շուրջ 85 տոկոսը վաճառվել է հենց ամբողջական հավի տեսքով: Իսկ վերջին 10 տարվա ընթացքում հավի մսի՝ ամբողջական հավի տեսքով իրացումը կազմում է ընդհանուր իրացման 10 տոկոսից էլ փոքր մասը: Ներկայումս սպառողներն առավելապես նախընտրում են ձեռք բերել հավի միս ոչ թե ամբողջական, այլ առանձին մասերով, և այս միտումը տարածվել է ամբողջ աշխարհում: Թերևս, այս հանգամանքը լրացուցիչ ազդակ է հանդիսացել հավի մսի սպառման ծավալների աճի համար:


Աղյուսակ 2

Թռչնամսի համաշխարհային սպառման առաջադարձերը, երկրների խմբերը 1990-2020 թթ. (մլն տոննա)¹⁰

	1990	1995	2000	2005	2010	2015	2016	2017	2018	2019	2020
ԵՄ	6.1	7.1	8.0	9.2	9.8	11.0	11.4	11.4	11.8	11.8	12.0
ԱՄՆ	10.1	11.8	13.8	15.9	16.0	17.4	17.8	18.1	18.4	18.9	19.1
Բրազիլիա	2.1	3.7	5.2	5.2	8.5	9.3	9.2	9.4	9.3	10.1	10.0
Չինաստան	3.9	8.4	12.2	13.4	16.8	18.3	19.1	19.0	20.0	22.7	24.8
Հնդկաստան	0.4	0.6	0.9	1.4	2.2	3.3	3.5	3.8	4.1	4.2	3.8
ՌԴ	1.5	1.8	1.5	2.8	3.2	4.3	4.3	4.6	4.6	4.5	4.6
Ջարգացող երկրներ	16.3	27.2	30.8	36.7	39.7	45.0	46.1	46.7	48.0	48.5	49.2
Ջարգացած երկրներ	12.1	27.2	37.4	43.6	59.7	69.6	71.3	74.3	76.8	81.6	82.8
OECD	16.3	27.3	32.0	37.3	39.8	44.8	46.2	46.8	48.2	48.8	49.4
Աշխարհ	28.4	54.3	68.1	80.4	99.4	114.5	117.8	121.0	124.7	130.1	132.0

¹⁰ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#

Թռչնամսի սպառման ծավալների աճը՝ հիմնված նախասիրությունների, ավանդույթների, ինչպես նաև սպառողների շրջանում թռչնամսի որակական և սննդային հատկությունների մասին պատկերացումների վերանայման արդյունքում վարքագծային փոփոխությունների վրա, զգալիորեն թուլացրել է մսի տեսակների ընտրության կախվածությունը եկամուտների մեծությունից (քանի որ հայտնի է, որ ավանդաբար բարձր եկամուտ ունեցող երկրների և բնակչության խմբերի համար առավել նախապատվելի են եղել մսի առավելապես կարմիր տեսակները): Դիտարկված 30 տարվա ընթացքում զգալիորեն մեծացել են թռչնամսի սպառման ծավալները հենց զարգացած և բարձր եկամուտ ունեցող երկրներում: Այսպես՝ եթե 1990 թ. զարգացած և զարգացող երկրներում թռչնամսի սպառման ծավալներն ապահովել են թռչնամսի համաշխարհային սպառման համապատասխանաբար՝ 42.6%-ը և 57.4%-ը, ապա այդ համամասնությունն արդեն 1995 թ. հավասարվել է, իսկ 2020 թ. զարգացած երկրներն ապահովել են թռչնամսի համաշխարհային սպառման 62.7%-ը, իսկ զարգացող երկրների մասնաբաժինն իջել է մինչև 37.3% (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Զարգացող և զարգացած երկրների թռչնամսի սպառման մասնաբաժինը համաշխարհային սպառման ընդհանուր ծավալում 1990–2020 թթ.¹¹

Եթե զարգացած և զարգացող երկրներում թռչնամսի սպառման ծավալները համադրենք այդ երկրների բնակչության թվի և վերջինիս աճի տեմպերի հետ, ապա միտումը, որ բարձր եկամուտներով երկրներում մսի բոլոր տեսակներից նախապատվությունը տալիս են հենց թռչնամսի սպառմանը, և որ դա պայմանավորված չէ վերջինիս ցածր գնով, առավել ընդգծված կդառնա:

Այսպես՝ 1990–2020 թթ. աշխարհում բնակչության մեկ շնչի հաշվով մսի տարեկան սպառման ծավալներն աճել են գրեթե 60%-ով՝ 21.3 կգ-ից հասնելով 34 կգ-ի:

¹¹ Հաշվարկները կատարել են հեղինակները: Տվյալների աղբյուրը՝ https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#

Աղյուսակ 3


Աշխարհում մսի փարբեր տեսակների սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով 1990–2020 թթ. (կգ)¹²

	Սպա- ռումը (կգ)	Մասնա- բաժինը (%)	Սպա- ռումը (կգ)	Մասնա- բաժինը (%)	Սպա- ռումը (կգ)	Մասնա- բաժինը (%)	Սպա- ռումը (կգ)	Մասնա- բաժինը (%)
Տավարի միս	6.07	28.5%	6.75	22.8%	6.57	19.9%	6.33	18.6%
Խոզի միս	9.3	43.6%	11.38	38.5%	12.17	36.8%	10.88	32.0%
Ոչխարի միս	1.26	5.9%	1.65	5.6%	1.7	5.1%	1.82	5.4%
Թռչնամիս	4.69	22.0%	9.81	33.1%	12.64	38.2%	14.98	44.0%
Ընդամենը	21.32		29.59		33.08		34.01	

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում, բացարձակ մեծությամբ, մեկ շնչի հաշվով սպառման ծավալների շարունակական աճ առկա է միայն թռչնամսի և ոչխարի մսի պարագայում, իսկ տավարի և խոզի մսի սպառումը տարբեր տարիներից սկսել է նվազել: Ընդ որում, պետք է նշել, որ 2020 թ. COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների ազդեցությունը մսի բոլոր տեսակների սպառման վրա ունեցել է միևնույն ազդեցությունը, և, բացի դրանից, տավարի և խոզի մսի սպառման ծավալները 2020 թ. գրեթե համընկնում են 2019 թ. ցուցանիշների հետ (2020 թ. առկա է աննշան անկում), ուստի վերջինով չի կարող պայմանավորված լինել մսի այս երկու տեսակների սպառման ծավալների անկումը: Տավարի մսի՝ մեկ շնչի հաշվով սպառումն աշխարհում սկսել է նվազել դեռևս 2000-ականների կեսերից (առավելագույն սպառումն արձանագրվել է 2006 թ.՝ 6.88 կգ), իսկ մեկ շնչի հաշվով խոզի մսի սպառման ծավալի նվազումը սկսվում է 2016 թ. (առավելագույն սպառումն արձանագրվել է 2016 թ.՝ 12.62 կգ): Ավելին, ամբողջ աշխարհում COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների հետևանքով անգամ 2020 թ., 2019 թ. համեմատությամբ, մսի բոլոր տեսակներից միայն թռչնամսի պարագայում է սպառման աճ արձանագրվել. մսի մյուս բոլոր տեսակների սպառումը մեկ շնչի հաշվով նվազել է: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ դիտարկվող ժամանակահատվածում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալների 59.5% աճի շուրջ կեսն ապահովվել է թռչնամսի սպառման հաշվին:

Ինչպես արդեն նշել ենք, կարևոր է դիտարկել այն հանգամանքը, որ մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալները, ըստ երկրների զարգացման մակարդակների, զգալիորեն տարբեր են: Այսպես՝ զարգացած երկրներում մսի սպառման միջին ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով 2020 թ. շուրջ 2.6 անգամ գերազանցում է զարգացող երկրների համանուն ցուցանիշը: Իսկ դիտարկվող 1990–2020 թթ. ընդգրկող ժամանակահատվածի առանձին տարիներին այդ տարբերությունը մոտեցել է ընդհուպ մինչև 4 անգամի (գծապատկեր 3):

¹² https://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=HIGH_AGLINK_2021&lang=en#



Գծապատկեր 4. Ջարգացած և զարգացող երկրներում մսի սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով (կգ)¹³

30 տարվա կտրվածքով զարգացող երկրներում մսի սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով գրեթե կրկնապատկվել է. աճը կազմել է 99.4%, որն ամենաբարձրն է երկրների մյուս խմբերի համեմատությամբ: Ջարգացած երկրներում մեկ շնչի հաշվով մսի սպառման աճը կազմել է 35.3%, OECD-ի երկրներում՝ 35.5%, համաշխարհային միջինի աճը՝ 59.4%, այդուհանդերձ, խզումը զարգացած և զարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալների միջև հսկայական է՝ միջինը 3 անգամ: 2020 թ. զարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառումը կազմել է 68.6 կգ: Գրեթե նույնքան է նաև սպառումը OECD-ի երկրներում՝ 69.3, իսկ զարգացող երկրներում այս ցուցանիշի միջին արժեքը 26.2 կգ է: Արդյունքում՝ մսի համաշխարհային սպառման միջին ցուցանիշը, բնակչության մեկ շնչի հաշվով, կազմել է տարեկան 34.0 կգ:


Ըստ առանձին երկրների՝ մսի սպառման ծավալների միջև նույնպես առկա է էական խզում: Այսպես՝ ԱՄՆ-ում մեկ շնչի հաշվով տարեկան սպառվում է 95 կգ միս, Չինաստանում՝ 50 կգ, իսկ Հնդկաստանում՝ 2.9 կգ: Հայաստանում այս ցուցանիշը 19.7 կգ է: Տարբերությունները պայմանավորված են բազմաթիվ գործոններով՝ եկամուտների մակարդակ, սովորույթներ, ավանդույթներ, որոշ երկրներում նաև կլիմայական պայմաններ (օրինակ՝ Բրազիլիայի պարագայում)¹⁴:

Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառմանը, ապա պետք է նշել, որ մսի համաշխարհային սպառման ծավալների մեջ թռչնամսի սպառման մասնաբաժինը դիտարկվող ժամանակահատվածում աճի ամենաբարձր տեմպն ունի բոլոր երկրներում: Ջարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով սպառման աճի տեմպը (5.2%) ավելի բարձր է զարգացած երկրների համեմատությամբ (3.3%), ինչի արդյունքում միջին

¹³ Աղբյուրը՝ OECD-FAO Agricultural Outlook 2016-2025:


¹⁴ Մշակույթի ազդեցության գնահատականը սպառման ծավալների վրա տե՛ս **Swatland H.J.**, նշվ. աշխ., http://ssu.ac.ir/cms/fileadmin/user_upload/Mtahghighat/tfood/ARTICLES/meat/Meat_products_and_consumption_culture_in_the_East.pdf

խզումը (տարբերությունը) այդ երկրների խմբի միջև դիտարկվող ժամանակահատվածում ավելի փոքր է մսի բոլոր տեսակների և ընդամենը մսի սպառման համեմատությամբ: Բացի դրանից, զարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառման ծավալների աճի տեմպը շուրջ 3 անգամ ավելի բարձր է մսի բոլոր տեսակների գումարային սպառման ծավալների աճի տեմպից: Ըստ այդմ՝ այդ երկրների մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառման ծավալների միջև խզումը փոքրացել է՝ 1990 թ. 2.6 անգամից 2020 թ. հասնելով մոտ 2 անգամի:



Գծապատկեր 5. Բնակչության մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառման դինամիկան զարգացման փուլերի մակարդակ ունեցող երկրներում (կգ/տարի)

Ջարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառումը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 2.5 անգամ, իսկ մսի ընդհանուր սպառումը՝ 35.5%-ով: Նույնկերպ՝ զարգացող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառումն աճել է 4.3 անգամ, այն դեպքում, երբ տվյալ ցուցանիշի համաշխարհային միջինն ավելացել է 3.2 անգամ:




Գծապատկեր 6. Բնակչության մեկ շնչի հաշվով թռչնամսի սպառման մասնաբաժինը մսի բոլոր տեսակների ընդհանուր սպառման մեջ 2020 թ. (կգ)¹⁵

Թռչնամսի բազմաթիվ տեսակներից արտադրության և սպառման առավել մեծ ծավալներ ապահովում է հենց հավի միսը: Ինչպես արդեն նշել ենք, սպառողները դա նախընտրում են, որովհետև՝ միսը սպիտակ է, համեղ է,

¹⁵ Աղբյուրը՝ OECD-FAO Agricultural Outlook 2016-2025:

ունի ցածր կալորիականություն, սննդարար է, էժան է ու հասանելի: Ներկայացված հատկանիշների ամբողջությունը հավի մսին, որպես ապրանքի, տալիս է այնպիսի առանձնահատկություններ, որոնք վերջինիս, սպառողական տեսանկյունից, տարանջատում են ինչպես մսի, այնպես էլ թռչնամսի այլ տեսակներից: Վերոգրյալը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ թռչնամսի համաշխարհային արտադրության շուրջ 90%-ը բաժին է ընկնում հենց հավի մսին (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. Թռչնամսի առանձին տեսակների համաշխարհային արտադրության ծավալները 2015–2019 թթ. (կգ)¹⁶


Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ մսի բոլոր տեսակներից թռչնամսը, իսկ թռչնամսի տեսակների մեջ՝ հավի միսը ամենատարածված և ամենալայն սպառում ունեցող արտադրանքն է, որի սպառման ծավալների աճն ինչպես աշխարհում, այնպես էլ առանձին երկրներում պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնք կարելի է խմբավորել տնտեսական, սննդային, մշակութային, էկոլոգիական և այլ խմբերում:

Թռչնամսի/հավի մսի սպառման նախապատվությունը մսի այլ տեսակների նկատմամբ հիմք է տալիս կանխատեսելու, որ մսի համաշխարհային սպառման կառուցվածքի փոփոխության վերը նշված միտումը շարունակվելու է նաև առաջիկա տասնամյակում: Համաձայն Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության (FAO) 2016 թ. կանխատեսման՝ թռչնամսի համաշխարհային արտադրության և սպառման ծավալների աճի տեմպերը պետք է հանգեցնեին նրան, որ 2030 թվականին աշխարհում մսի արտադրության և իրացման ծավալների մեջ թռչնի միսը կազմեր սպիտակուցի պարունակությամբ մսի ընդհանուր ծավալի 40%-ն այն դեպքում, երբ տավարի միսը կկազմեր 20%-ը, խոզի միսը՝ 34%-ը, իսկ ոչխարի միսը՝ 5%-ը: Արդեն 2020 թ. թռչնի միսն ապահովում է մսի համաշխարհային արտադրության 40.7%-ը, խոզի միսը՝ 33.0%-ը, տավարի միսը՝ 21.5%-ը, ոչխարի միսը՝ 4.9%-ը: Այսինքն՝ միայն վերջին 5 տարում թռչնամսի արտադրության ոլորտը դրսևորել է «ագրեսիվ» աճի բավականին բարձր տեմպեր, ինչը, անշուշտ, շարունակվելու է նաև ապագայում:

¹⁶ Աղբյուրը՝ <http://www.fao.org/faostat/ru/#compare>

ՀՀ թռչնամսի շուկայի զարգացման միտումները

Թռչնամսի միջազգային շուկայում նկատվող հիմնական միտումները գրեթե ամբողջությամբ և նույնությամբ դրսևորվում են նաև հայաստանյան շուկայում: Վերջին 15 տարվա ընթացքում Հայաստանում թռչնամսի, մասնավորապես՝ հավի մսի պահանջարկը շարունակաբար աճում է՝ վերջին տարիներին կազմելով 55–57 հազար տոննա, որից, սակայն, միայն 20-25%-ն է ապահովվում տեղական արտադրության հաշվին: Այսպես՝ մսի դիտարկված 4 տեսակներից վերջին տարիներին Հայաստանում արտադրվում է միջինը 100-110 հազ. տոննա (գծապատկեր 8):




Գծապատկեր 8. Մսի առանձին տեսակների արտադրությունը ՀՀ-ում 2005–2020 թթ. (հազ. տոննա)¹⁷

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում հանրապետությունում մսի արտադրության ծավալները գրեթե կրկնապատկվել են (աճը՝ 92%), այդ թվում՝ տավարի մսի արտադրությունն աճել է 99.4%-ով, խոզի մսինը՝ 67.0%-ով, ոչխարի մսինը՝ 42.1%-ով, իսկ թռչնամսի արտադրությունը՝ շուրջ 2.7 անգամ: Արտադրության ծավալի միջին տարեկան աճն ըստ տեսակների կազմում է. տավարի մսի դեպքում՝ 4.9%, խոզի մսի դեպքում՝ 5.7%, ոչխարի մսի դեպքում՝ 2.6% և թռչնամսի դեպքում՝ 7.9%:


Մսի առանձին տեսակների արտադրության ծավալների և ընդհանուրի մեջ վերջիններիս ունեցած մասնաբաժինների առումով ՀՀ-ում առաջատարը տավարի միսն է: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում զգալի կաուցվածքային տեղաշարժեր չեն գրանցվել (գծապատկեր 9):

¹⁷ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍ) հրապարակած տվյալների, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:



Գծապատկեր 9. Մսի առանձին տեսակների արտադրության մասնաբաժինն ընդհանուրի մեջ ՀՀ-ում¹⁸

Ինչպես նկատելի է, դիտարկվող 15 տարվա ընթացքում խոզի և ոչխարի մսի արտադրության մասնաբաժինները նվազել են, իսկ տավարի մսին ու թռչնամսինը՝ աճել: Սակայն արտադրության ծավալների հիման վրա մսի առանձին տեսակների նախապատվության և դրա հիման վրա սպառողների վարքագծային փոփոխությունների վերաբերյալ պատկերացումը մասնակի է, և անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մսի առանձին տեսակների մասով ՀՀ-ում ինքնաբավության մակարդակները խիստ տարբեր են. մսի որոշ տեսակների սպառման ծավալների մի զգալի մասն ապահովվում է ներմուծման հաշվին: Ուստի, այս առումով, անհրաժեշտ է դիտարկել մսի սպառման ծավալներն ու ինքնաբավությունը: Այսպես՝ եթե ոչխարի մսի ինքնաբավությունը 2005–2013 թթ. կազմել է 100%, իսկ դրանից հետո ցուցանիշն էլ ավելի է բարձրացել, և Հայաստանը սկսել է նաև արտահանել ոչխարի միս, ապա թռչնամսի պարագայում ինքնաբավության աստիճանն ամենացածրն է և դիտարկվող ժամանակահատվածում կազմել է միջինը 20% (գծապատկեր 10):




Գծապատկեր 10. Մսի տեսակների ինքնաբավությունը ՀՀ-ում, 2005–2020 թթ. (տոկոս)¹⁹

¹⁸ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍԱՏ) հրապարակած տվյալների, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

¹⁹ Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍԱՏ) հրապարակած տվյալների, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

Սպառման ծավալների առումով նույնպես դիտարկվող ժամանակահատվածում առկա է զգալի աճ մսի բոլոր տեսակների մասով: Եթե 2005 թ. մսի բոլոր տեսակների սպառումը ՀՀ-ում կազմել է շուրջ 92.0 հազ. տոննա, ապա արդեն 2020 թ. հասել է 175.0 հազ. տոննայի՝ աճելով մոտ 90%-ով: Սակայն, ի տարբերություն արտադրության ծավալների, երբ կառուցվածքային տեղաշարժերն էական չեն, մսի սպառման ծավալների աճի տեմպերն ու դրանցով պայմանավորված կառուցվածքային տեղաշարժերը բավականին մեծ են (գծապատկեր 11):





Գծապատկեր 11. Մսի սպառման ծավալների դինամիկան ՀՀ-ում, հազ. տոննա²⁰

Դիտարկվող ժամանակահատվածում, բացարձակ մեծությամբ, սպառման ծավալների աճը զգալի է մսի բոլոր տեսակների պարագայում: Սակայն աճի ամենաբարձր տեմպն ունեցել է թռչնամսի սպառումը, որը դիտարկվող 15 տարվա ընթացքում աճել է 2.2 անգամ: Տավարի մսի սպառումն աճել է 75.9%-ով, ոչխարի մսինը՝ 41%-ով, խոզի մսի սպառման ծավալների աճի ցուցանիշը նույնպես բավական բարձր է՝ 2.1 անգամ, թեև խիստ տատանողական բնույթ է ունեցել: Արդյունքում՝ աճի միջին տարեկան տեմպերով թռչնամսի սպառումը շուրջ 2 անգամ գերազանցում է տավարի և խոզի մսի սպառման աճի և մոտ 5 անգամ՝ ոչխարի մսի սպառման աճի միջին տեմպը (գծապատկեր 12):


Որպես հետևանք՝ մսի սպառման կառուցվածքը ՀՀ-ում 2005–2020 թթ. էականորեն փոխվել է. շուրջ 4 տոկոսային կետով նվազել է տավարի և 2 տոկոսային կետով՝ ոչխարի մսի սպառումը, փոխարենն աճել է թռչնամսի սպառման մասնաբաժինը:

²⁰ Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) հրապարակած տվյալների հիման վրա, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:



Գծապատկեր 12. Մսի սպառման կառուցվածքը ՀՀ-ում²¹

Մեկ շնչի հաշվով սպառման ծավալների փոփոխության դինամիկան առավել համահունչ է մսի համաշխարհային սպառման փոփոխություններին: Այսպես՝ Հայաստանը, ըստ OECD դասակարգման, համարվում է զարգացող կամ եկամտոտների միջին մակարդակ ունեցող երկիր: Բնակչության մեկ շնչի հաշվով մսի սպառման ծավալները ՀՀ-ում 2005–2020 թթ. արձանագրել են աճի բավականին տպավորիչ ցուցանիշներ: Եթե 2005 թ. բնակչության մեկ շնչի հաշվով մսի ընդհանուր տարեկան սպառումն ավելի քան 2 անգամ պակաս է զարգացած երկրների միջին սպառման մակարդակից և համընկնում է նշված ցուցանիշի համաշխարհային միջին մեծության հետ՝ կազմելով շուրջ 30 կգ, ապա արդեն 2020 թ. այս ցուցանիշով ՀՀ-ն ընդհուպ մոտեցել է զարգացած երկրների միջին ցուցանիշին (գծապատկեր 13):




Գծապատկեր 13. Մսի առանձին տեսակների սպառումը ՀՀ-ում՝ բնակչության մեկ շնչի հաշվով²²

²¹ Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍՏ) հրապարակած տվյալների, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն, ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

²² Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍՏ) հրապարակած տվյալների, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

ՀՀ-ում մսի արտադրության և սպառման ծավալների տարբերությունն ապահովվել է ներմուծման հաշվին, քանի որ ՀՀ-ից մսի արտահանում չի իրականացվել, բացառությամբ ոչխարի մսի: Ակնհայտ է, որ ներմուծման ծավալներով մսի տեսակներից առաջատարը թռչնամիսն է:

2005–2020 թթ. ՀՀ-ում թռչնամսի ամբողջական առաջարկի մեջ ներմուծման մասնաբաժինը մշտապես գերազանցել է ներքին արտադրության ցուցանիշը (միջինը՝ 4.4 անգամ): Ներմուծում/արտադրություն հարաբերակցության ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2006 թ.՝ 2.1, իսկ ամենաբարձրը՝ 2011-ին՝ 7.2: Արդեն 2020 թ. ներմուծման ծավալներն արտադրության ծավալները գերազանցել են ավելի քան 3.5 անգամ: Արդյունքում՝ ներմուծումն ապահովել է թռչնամսի ամբողջական առաջարկի (57.9 հազ. տոննա) ընդամենը 77.5%-ը²³ (գծապատկեր 14):



Գծապատկեր 14. Թռչնամսի արտադրության, ներմուծման, ամբողջական առաջարկի ծավալները և ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում 2005–2020 թթ.²⁴

Եթե դիտարկվող ժամանակաշրջանում թռչնամսի արտադրության ծավալները դրսևորել են կայուն աճի միտում (միջին տարեկան աճի տեմպը՝ 8.3%) և ըստ տարիների կտրուկ տատանումներ չեն ունեցել, բացառությամբ՝ 2009 թ., երբ նախորդ տարվա համեմատությամբ նվազել են ավելի քան 30 տոկոսով՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով, ապա ներմուծման ծավալները դրսևորել են խիստ տատանողական վարքագիծ:


Պետք է նշել, որ ՀՀ-ում թռչնամսի թե՛ արտադրության և թե՛ ներմուծման շուրջ 97–98%-ը կազմում է հավի միսը, իսկ ներմուծման գործընթացի շրջանակներում մեկ այլ կարևոր հանգամանք է արտահանման երկրների աշխարհագրությունը՝ հաշվի առնելով, որ թռչնամսի, այդ թվում՝ հավի մսի

²³ Ցուցանիշը հաշվարկել են հեղինակները՝ ըստ գծապատկեր 2-ի տվյալների:

²⁴ Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) հրապարակած տվյալների, մասնավորապես՝ ArmStatBank տվյալների բազայի հիման վրա: Պարենային ապահովություն: ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների:

գերակշիռ մասը ներկրվում է ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից (գծապատկեր 15):

Ինչպես տեսնում ենք, ներմուծման կառուցվածքի մեջ միայն ՌԴ-ն է ԵԱՏՄ անդամ երկիր: Նրա մասնաբաժինը ընդհանուր ներմուծման մեջ բավական փոքր է՝ շուրջ 16%: Սա նշանակում է, որ, ըստ մաքսատուրքերի փոփոխման ժամանակացույցի, որը ներկայացված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքում, 2021 թվականից ընտանի թոշնամսի և մասնաբերքի ներմուծման մաքսատուրքը 22%-ից պետք է դառնար 50%,²⁵ սակայն ԵԱՏՄ-ի կողմից ՀՀ-ին տրվող թոշնամսի ներմուծման քվոտայի շրջանակներում բարձրացել է միայն 3 տոկոսային կետով՝ կազմելով 25%²⁶:



Գծապատկեր 15. Թոշնամսի և հավի մսի ներմուծման ծավալները 2020 թ.՝ ըստ արտահանման երկրների²⁷

2022 թվականից երրորդ երկրներից հավի մսի ներմուծման մաքսատուրքը դառնալու է 80%²⁸: Թե որքան կլինի քվոտայի շեմը, և ինչ մաքսատուրքեր կսահմանվեն դրա շրջանակներում, հստակ չէ, սակայն ակնհայտ է, որ մաքսային պայմանների վերոնշյալ փոփոխությունների դեպքում Հայաստանում թոշնամսի արտադրությունը կդառնա շատ գրավիչ:

Եզրակացություններ: Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ առաջիկա առնվազն տասնամյակի համար Հայաստանում առկա են թոշնամսի արտա-

²⁵ Տե՛ս <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ttr/Pages/default.aspx>

²⁶ Քվոտայի շրջանակը որոշվում է միջկառավարական ամենամյա համաձայնագրով՝ հիմնվելով նախորդ տարվա ներմուծման ծավալների վրա՝ -10%+10% շեղման միջակայքում: Քվոտան սահմանվում է ըստ ներմուծողների կողմից տարեսկզբին նախապես տրվող հայտարարությունների, սակայն փաստացի ներմուծումներով և նշված սահմանաչափով քվոտայից ավելի ներմուծման նկատմամբ կիրառվում է միասնական սահմանված դրույքաչափը: 2021 թ. քվոտան ՀՀ-ի համար սահմանվել է 44 հազար տոննա, որը գերազանցելու դեպքում ներմուծողներն արդեն ստիպված կլինեն վճարել ոչ թե 25% ներմուծման մաքսատուրք, այլ 50%:

²⁷ Տե՛ս ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIIImportStatistics>

²⁸ Տե՛ս <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ttr/Pages/default.aspx>

դրության զարգացման և ծավալների մեծացման լուրջ նախադրյալներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Մշակութային, կրոնական, ավանդութային, ինչպես նաև տնտեսական գործոններով պայմանավորված՝ մսի կարմիր տեսակների նկատմամբ սպիտակ մսի, իսկ դրանում՝ թռչնամսի սպառման՝ աշխարհում նկատվող նախապատվության հստակ միտումներն առկա են նաև ՀՀ-ում, որն արտահայտվում է թե՛ ընդհանուր սպառման և թե՛ մեկ շնչի հաշվով սպառման ծավալների անընդհատ ավելացմամբ:

2. Հաշվի առնելով, որ Հայաստանում թռչնամսի պահանջարկի միայն 20–25%-ն է բավարարվում ներքին արտադրության հաշվին, կարելի է փաստել, որ թռչնամսի արտադրության ոլորտում առկա չիրացված մեծ ներուժը կարող է դառնալ լուրջ ազդակ ներքին արտադրության ծավալների ավելացման և պահանջարկի մեծ մասը տեղական արտադրության հաշվին ապահովելու համար: Իսկ այդ ներուժը կարող է ժամանակի ընթացքում իրացվել տվյալ ոլորտում արտադրական խոշոր կենտրոնների ձևավորման ճանապարհով: Աշխարհում վաղուց ապացուցվել է նմանատիպ կենտրոնների կենսունակությունը, ուստի այդ ճանապարհով Հայաստանում թռչնարտադրության զարգացումն այլընտրանք չունի: Կարծում ենք՝ պետությունը ևս պետք է որդեգրի որոշակի ուղղորդված քաղաքականություն, ինչը կնպաստի ոլորտում ներդրումների ներգրավմանն ու ավելի արագ զարգացմանը: Հարկ է նշել, որ ժամանակին Հայաստանն ունեցել է թռչնարտադրության հաջողված փորձ՝ ապահովելով ինքնաբավության բավական բարձր մակարդակ՝ մինչև 80–90%:

3. Առանց դիտարկելու թռչնամսի ներմուծվող և տեղական արտադրության գնային տարբերությունները՝ պետք է արձանագրել, որ տնտեսությունում մշտապես առկա է թռչնամսի հանդեպ բարձր պահանջարկ: Թռչնամսի տարեկան ամբողջ պաշարը սպառվում է, և տարեվերջի չիրացված մնացորդները գրեթե զրոյական են: Ընդ որում, 2005–2020 թթ. ընթացքում պահանջարկի և առաջարկի հավասարությունն ապահովվել է ներմուծման տատանողականության հաշվին, այն դեպքում, երբ արտադրության ծավալներն առավել կայուն դինամիկա են դրսևորել և տարեցտարի անընդհատ աճել են: Կարևոր է նշել, որ ներմուծված թռչնամիսը պահպանելու հետ կապված խնդիրներ չկան, քանի որ հավը ներմուծվում է սառեցված վիճակում (ինչպես ամբողջական, այնպես էլ մասերի բաժանված): Տեղական արտադրության պարագայում հավի միսը վաճառվում է հիմնականում պաղեցված կամ թարմ վիճակում և քանի որ ամբողջությամբ իրացվում է, սառեցման անհրաժեշտություն չի առաջանում: Այսինքն՝ ի տարբերություն շատ ապրանքների, թռչնամսի պարագայում սպառողներն, այլ հավասար պայմաններում, նախընտրում են գնել տեղական արտադրանքը, որն արդեն իսկ տեղական արտադրողի համար լուրջ մրցակցային առավելություն է:

4. Անկախ ներմուծվող և տեղական արտադրության թռչնամսի գնային տարբերություններից՝ դրա ներքին պահանջարկի բավարարման ծավալում ներմուծման զգալի մասնաբաժինը մեծացնում է ներմուծման ազդեցությունը ներքին գների ձևավորման վրա: Հայաստանը դեռևս հեռու է թռչնամսի պահանջարկի բավարարման առումով ինքնաբավ երկիր համարվելուց, և հենց ինքնաբավության ցածր մակարդակն էլ ներքին շուկան խոցելի է դարձնում

արտաքին ցնցումների հանդեպ: Որպեսզի թռչնամիս արտադրող հայաստանյան ընկերությունները նույնպես պատրաստ լինեն թռչնամսի աճող պահանջարկին և դա տեղական արտադրության հաշվին բավարարելուն, նրանք ևս պետք է որդեգրեն զարգացման այն ուղին, որը բնորոշ է միջազգային շուկայում գործող թռչնարտադրությամբ զբաղվող ընկերություններին: Այսինքն՝ ընկերությունները պետք է կենտրոնացնեն արտադրական գործընթացի տարբեր օղակները մեկ համակարգում: Դա հնարավորություն է տալիս ստեղծելու մասնագիտացված խոշոր արտադրական համալիրներ, որոնք ներառում են արտադրական ամբողջ շղթան՝ սկսած կերի, հումքի արտադրությունից մինչև պատրաստի արտադրանքի թողարկում: Խոշոր արտադրական միավորների ձևավորումը ընկերություններին տալիս է մի շարք առավելություններ, մասնավորապես՝

- ավելի արդյունավետ և օպերատիվ կառավարել արտադրական ամբողջ շղթան՝ կանխատեսվող արդյունքներից շեղումները հասցնելով նվազագույնի,
- կարողանում են էականորեն կրճատել լոգիստիկ ծախսերը,
- տնտեսել այն գումարները, որոնք հումքի կամ կերի ներմուծման ժամանակ ուղղվում են մաքսատուրքերի, մաքսային վճարների և այլ ուղեկցող ծախսերի կատարմանը,
- արտադրության ծավալների մեծացման արդյունքում ունենալ մասշտաբից տնտեսման էֆեկտ, հետևաբար՝ ինքնարժեքի նվազում:

Կարևոր հանգամանք է, որ ԵԱՏՄ երկրներից ներմուծման ժամանակ ծագման երկրի հավաստագրի առկայության պարագայում կիրառվում է 0% մաքսատուրքի դրույքաչափ, իսկ երրորդ երկրներից ներմուծման դեպքում՝ 50%: Ի դեպ, վերջինս 2020 թ-ից պետք է դառնար 80%, սակայն քվոտայի շրջանակներում նվազեցվեց. 2020 թ. կիրառվել է 22%, 2021 թ.՝ 25%, սակայն, ամենայն հավանականությամբ, այդ դրույքաչափն ապագայում կբարձրանա: Ընդ որում, ներմուծման մաքսային պայմանների հնարավոր փոփոխությունը կազդի ներմուծման գրեթե 80%-ի վրա: Ակնհայտորեն, ներմուծման աշխարհագրությունը կտրուկ կփոխվի՝ հօգուտ ԵԱՏՄ երկրների: Կառուցվածքային փոփոխություններից բացի, տվյալ ապրանքային շուկայում կգրանցվեն նաև գնային տատանումներ՝ առավելապես բարձրացման ուղղությամբ, ինչը լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ տեղական արտադրության ծավալների ավելացման համար:

Օգտագործված գրականություն

1. Barbut S., The Science of Poultry and Meat Processing, Chapter 2, 2015.
2. Hellin J., Krishna V.; Erenstein O. and Boeber C., India’s Poultry Revolution: Implications for Its Sustenance and the Global Poultry Trade, International Food and Agribusiness Management Review, 18, 2015.
3. Swatland H.J., 2010, Meat Products and Consumption Culture in the West, Meat Science, 86, 2010.
4. Jenner M., Understanding the Lender’s Share of Grower Contract Pay, January 3, 2002.

5. Taylor R. and Domina D., Restoring Economic Health to Contract Poultry Production, 2010.
6. Grunert K., G. Food quality and safety : Consumer perception and demand. European Review of Agricultural Economics, 32(3), 2005.
7. Valceschini Egizio, Poultry meat trends and consumer attitudes, January 2006,
https://www.researchgate.net/publication/228586389_Poultry_meat_trends_and_consumer_attitudes
8. Overview of global meat market developments in 2020, Meat market review, The Food and Agriculture Organization of the United Nations (FAO), March 2021.
9. FAO, World Agriculture: Towards 2015/2030. An FAO Perspective.
10. OECD-FAO, Agricultural Outlook 2021-2030, Poultry meat projections: Consumption, food, July 2021.
11. USDA, Livestock and Poultry: World Markets and Trade. Foreign Agricultural Service, April 2017.
12. Обзор рынка мяса птицы государств-членов Евразийского экономического союза за 2012–2016 гг., Департамент агропромышленной политики Евразийской экономической комиссии, М., 2017.
13. Мировой рынок мяса: современные тенденции развития и перспективы участия России, Золотарева Е. Л.,
<https://cyberleninka.ru/article/n/mirovoy-rynok-myasa-sovremennye-tendentsii-razvitiya-i-perspektivy-uchastiya-rossii/viewer>
14. <https://www.armstat.am>
15. <http://www.eurasiancommission.org>
16. <http://www.fao.org>
17. <https://data.oecd.org>
18. <https://www.petekamutner>

ТАТУЛ МКРТЧЯН

*Проректор по науке АГЭУ,
доктор экономических наук, доцент*

ЭРИК АМБАРЦУМЯН

*Доцент кафедры международных
экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук*

МЕЛАНЬЯ КАРАГЕЗЯН

Преподаватель кафедры макроэкономики АГЭУ

АЙК САРГСЯН

Кандидат экономических наук

Тенденции развития рынка мяса птицы в мире и в Армении. – В последние годы структура потребления различных видов мяса в товарной группе «Мясо» во всем мире существенно изменилась, в основном из-за увеличения доли мяса птицы, а в нем – курятины.

Рост темпов потребления мяса птицы привел к ситуации, когда потребление мяса птицы в мире уже превысило потребление других, традиционных видов мяса, составив около 40% от общего потребления мяса в мире.

В Армении употребляют абсолютно все виды мяса, но структурные изменения в потреблении мяса, происходящие в мире, находят отражение и в нашей стране. Будучи страной с маленькой экономикой, которая импортирует около 70-75% потребляемого мяса птицы, РА реагирует на изменения по потреблению мяса, происходящие в мировой экономике.

Следовательно, необходимо изучить основные тенденции развития мировых и отечественных рынков мяса птицы с целью выявления воздействий последних на экономику РА: возможные изменения в объемах потребления, обусловленные изменением предпочтений потребителей, а также изменения в структуре внутреннего рынка под их влиянием.

Ключевые слова: *мясо птицы, курятина, продукция птицеводства, международные тенденции потребления мяса птицы, местное производство мяса птицы.*

JEL: L1, Q11, Q12

DOI: 10.52174/1829-0280_2021_4_115

TATUL MKRTCHYAN

*Vice-rector for Science of ASUE,
Doctor of Economics, Associate Professor*

ERIK HAMBARDZUMYAN

*Associate Professor of the Chair of International Economic Relations of ASUE,
PhD in Economics,*

MELANYA GHARAGYOZYAN

Lecturer of the Chair of Macroeconomics of ASUE

HAYK SARGSYAN

PhD in Economics

Development Trends of the Poultry Meat Market in the World and in Armenia. – In recent years, the consumption structure of the "Meat" product group around the world has changed significantly, mainly in the direction of increasing the share of poultry, including chicken. In case of maintaining such growth rates of poultry consumption in the next decade, the consumption of poultry meat in the world will exceed the consumption of other types of meat, accounting for about 40% of total meat consumption. In Armenia, all types of meat are consumed equally, but the structural changes of meat consumption taking place in the world are also reflected in our country. Moreover, being a country with a small economy, which

imports about 70-75% of the consumed poultry meat, many changes of not only meat consumption preferences are transferred to the economy of the republic of Armenia, but also the price fluctuations of poultry meat. Therefore, it is essential to research the international and local poultry markets and the main emerging trends, to discover the ways of their transfer to the economy of the republic of Armenia and the impact on the domestic poultry market, identifying existing problems and proposing appropriate solutions.

Keywords: *poultry meat, chicken meat, poultry products, the art of eating poultry, local production of poultry meat.*

JEL: L1, Q11, Q12

DOI: 10.52174/1829-0280_2021_4_115